<< ***Հ ա ս տ ա տ ու մ ե մ*** >>
ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
Փ. Կարապետյան_____
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)
<<27>> ապրիլի 2011թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

1. Պատվիրատուի անվանումը **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան**

2. Պայմանագրի (կցվում է) կնքման ամսաթիվը **27.04.2011թ.**
3. Պայմանագրի ծածկագիրը՝ **Ն ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 11/1-6**

4. Պայմանագրի գումարը **112 395 000 (մեկ հարյուր տասներկու միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար)ՀՀ դրամ**
5. Պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում կանխավճարի չափը **Պայմանագրի գնի՝ 30 տոկոսը՝ 33 718 500 (երեսուներեք միլիոն յոթ հարյուր տասնութ հազար հինգ հարյուր)ՀՀ դրամ**
6. Պայմանագրի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ 2011թ. պետական բյուջե**

6.1 Պայմանագիրը պետական բյուջեից ֆինանսավորվելու դեպքում՝

Բաժին ***11*** Խումբ ***01*** Դաս ***01*** Ծրագիր ***01***

7. Պատվիրատուին սպասարկող գանձապետարանի ստորաբաժանման կոդը _____

8. Գնման ձևը (ընթացակարգ) **(ԲԸԱՀ) Բանակցային ընթացակարգ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու**

9. Պայմանագրի կատարման վերջնաժամկետը **25.08.2011թ**

10. Պայմանագիր կնքած անձի՝

10.1 անվանումը) **<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ տնօրեն՝ Ջ. Պետրոսյան**
10.2 հարկ վճարողի հաշվարկային հաշիվը **ՀՎՀՀ 04704351**
10.3 բանկային հաշիվը **h/h 163118009113 Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ**

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 11/1- 6

ք. Արմավիր <<27>> ապրիլի 2011թ.

<<ՀՀ Արմավիրի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և <<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ- ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ջ.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 ***Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել Արմավիրի մարզի գ.Արաքսի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և ք.Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:***

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանվում՝

գ.Արաքսի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման համար՝	25.08.2011թ.
ք.Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցի հիմնանորոգման համար՝	25.08.2011թ.

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի ներառյալ օրացուցային գրաֆիկի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից

հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը ներառյալ օրացուցային գրաֆիկը,

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդաթափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը

ներառյալ օրացուցային գրաֆիկը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

3.4.10 Աշխատանքը հանձնելուց հետո՝ 3 (երեք) տարվա ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար սույն պայմանագրով վճարված գնի այն մասը, որը կազմում է թերություններն ամբողջությամբ վերացնելու համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարը կամ հատուցել Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների

հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 երկու աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 20 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պաւովիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 111 361 000 (մեկ հարյուր տասնմեկ միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ, որից 18 560 200(տասնութ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

Չափաբաժին N 1 - գ.Արաքսի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների համար 55 134 000 (հիսունհինգ միլիոն մեկ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ՝ որից 9 189 000 (ինը միլիոն մեկ հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Չափաբաժին N 2 - ք.Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների համար 56 227 000 (հիսունվեց միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ՝ որից 9 371 200 (ինը միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնի 30 տոկոսը՝ 33 408 300 (երեսուներեք միլիոն չորս հարյուր ութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված աշխատանքների ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանգրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2011թ. պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսնված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով ներառյալ օրացուցային գրաֆիկը¤ նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5. Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն պայմանագրով նախատեսված կանխավճարի ապահովումը վերադարձվում է Կապալառուին՝ պայմանագրի կատարման ավարտից 40 օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ՝ կատարմանը համամասնորեն:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3	ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 16311800911 3	հ/հ 900331131079
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ	Արմավիրի ՏԳՊ
ՀՎՀՀ 01704351	ՀՎՀՀ 04415276
Ա. Պետրոսյան	Փ. Կարապետյան
Կ.Տ	Կ/Տ

Հավելված № 1

<<__27___>>__04__ 2011թ.

կնքված աշխատանքների կատարման

№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-11/1-6 գնման պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ N1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արմավիրի մարզի գ.Արաքսի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների

(հազար ՀՀ դրամ)

NN	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեք
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	Տանիքի գոյություն ունեցող	մ2	1158,8	0,48	556,22
2	Թիթեղյա ջրորդանի քանդում	մ2	67,3	0,62	41,73
3	Տանիքի փայտյա կառուցվածքների ապամոնտաժում	մ2	1226,1	0,45	551,75
4	Ջեղնապատուհանների քանդում	հատ	8,0	5,30	42,40
5	Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում /ներառյալ ջրհոս ձագարները/	գմ	64	1,35	86,40
6	Ջերմամեկուսիչ շերտի քանդում ե/բ գոտիների պատրաստման համար	մ3	7	9,60	67,20
7	Ջրամեկուսիչ եւ հարթեցնող շերտերի քանդում ե/բ գոտիների պատրաստման համար	մ2	33	2,80	92,40
8	Շին. աղբի հավաքում, բարձում ավտոինքնաթափերի վրա եւ արտահանում	տ	18,7	2,90	54,23
Բ	Նոր տանիքի կառուցում				
1	Ե/բ միաձույլ գոտիների պատրաստում B15 դասի բետոնից, փայտյա կանգնակների տակ	մ3	4,9	48,50	237,65
2	Ամրան Ի12А500С	տ	0,429	390,00	167,31
3	Ամրան Ի8Ас-I	տ	0,169	390,00	65,91
4	Ե/բ միաձույլ գոտիների պատրաստում	մ3	4,5	48,50	218,25
5	Ամրան Ի8Ас-I /ցանց/	տ	0,197	390,00	76,83
6	Տանիքի փայտյա կրող կառուցվածքների տեղադրում	մ3	21,8	164,30	3581,74
7	Ճարմանդներ Ի10Ас-I ամրանից /ըստ	տ	0,086	390,00	33,54
8	Ամրան Ի12А500С /ըստ նախագծի/	տ	0,012	390,00	4,68

9	Մետաղալարե ծգաններ Ի6Ac-I ամրանից /ըստ նախագծի/	տ	0,024	390,00	9,36
10	Տոլ հենատախտակների տակ /ըստ նախագծի/	մ2	49,9	0,54	26,95
11	Տանիքի ծածկույթի պատրաստում ցինկապատ մանրապրոֆիլային թիթեղից d=0.55մմ /ներառյալ կավարամածը/	մ2	1158,8	6,85	7937,78
12	Զրորդանի պատրաստում ցինկապատ թիթեղից հարթ d=0.55մմ, ներառյալ տախտակամածը	գմ	64	7,95	508,80
13	Գազաթնամասի պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից d=0.55մմ	մ2	90,2	6,50	586,30
14	Կեռեր շերտավոր պողպատից —2x20, 249 հատ /ըստ նախագծի/	կգ	7,8	0,43	3,35
15	Հենակներ շերտավոր պողպատից —4x40 /ըստ նախագծի/	կգ	56,3	0,43	24,21
16	Շերտապողպատ —3x30	կգ	82	0,43	35,26
17	Զրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից ներառյալ ջրհոս ծագարները	կ-տ	8	21,80	174,40
18	Տանիքի անվտանգության ճաղաշարի պատրաստում	գմ	241,6	3,25	785,20
19	Տանիքի անվտանգության ճաղաշարի արժեքը Ի20Ac-I ամրանից	տ	0,882	480,00	423,36
20	Տանիքի անվտանգության ճաղաշարի յուղաներկում 2 շերտ	մ2	72,3	1,20	86,76
21	Փայտյա կառուցվածքների հրապաշտպանում	մ3	21,8	12,20	265,96
22	Կավարամածի եւ տախտակամածի հրապաշտպանում	մ2	1226,1	0,28	343,31
23	Կավարամածի եւ տախտակամածի մշակում հականեխիչ մածիկով	մ2	1226,1	0,35	429,14
24	Ճակտոնի կավարամածի պատրաստում	մ2	13,4	1,35	18,09
25	Ճակտոնի պատում ցինկապատ հարթ թիթեղից d=0.55մմ	մ2	13,4	3,30	44,22
26	Խարսխային հեղյուսներ L=150մմ	հատ	464	0,07	30,16
27	Ջեղնապատուհանների պատրաստում շերտափեղկերով	հատ	8	56,80	454,40
28	Ջեղնապատուհանների հրապաշտպանում	մ3	4,8	12,20	58,56
29	Ջեղնապատուհանների մշակում հականեխիչ մածիկով	մ2	105,8	0,35	37,03

30	Ջեղնապատուհանների պատում ցինկապատ հարթ թիթեղով d=0.55մմ	մ2	83,2	5,30	440,96
31	Շերտափեղկերի յուղաներկում	մ2	17,6	1,25	22,00
32	Փայտյա աստիճանների պատրաստում /4 հատ/	մ3	0,32	149,50	47,84
33	Փայտյա աստիճանների յուղաներկում	մ2	3,5	1,25	4,38
	II. Դռների եւ **պատուհանների փոխում**				
1	Դռների եւ պատուհանների շեպերի գաջե սվաղի քանդում	մ2	229	0,65	148,85
2	Հին փայտե դռների հանում	մ2	85,8	1,0	84,08
3	Հին փայտե պատուհանների հանում	մ2	320	1,85	592
4	Շին. աղբի հավաքում, բարձում	տ	7	2,90	20,30
5	Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից, 60մմ հաստության ապակեպատ դռների տեղադրում (ներառյալ սարքերը, կողպեքը, ապակեպատումը)	մ2	85,8	38,60	3311,88
6	Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից, 60մմ հաստության ապակեփաթեթով պատուհանների տեղադրում (ներառյալ սարքերը, ապակեփաթեթը)	մ2	312	33,50	10451,69
7	Սպիտակ գույնի պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 350մմ	գմ	160	9,46	1513,60
8	Դռների եւ լուսամուտների շեպերի գաջե սվաղում	մ2	229,0	3,20	732,80
9	Պատերի ներկում ջրաէմուլսիոն ներկով	մ2	229,0	0,90	203,81
	III . Սան. հանգույցներ, արտաքին ցանցեր				
1	Սալերից միջնորմների քանդում	մ2	40	0,75	30,00
2	ՀԻՆ փայտե դռների հանում	մ2	3,36	1,22	4,08
3	Հատակի քանդում	մ2	29,4	0,6	16,46
4	Շին. աղբի հավաքում, բարձում ավտոինքնաթափերի վար եւ [illegible]	տ	5,5	2,9	15,95
5	Պատի շարվածք թեթեւաբետոնե բլոկներից /4մ2/	մ3	1	18,60	18,60
6	Ցեմենտ ավազե նախաշերտի պատրաստում 30մմ հաստ.	մ2	29,4	1,330	39,10
7	Հատակի ջրամեկուսացում 1 շերտ հեղուկամով	մ2	29,4	2,15	63,21
8	Խեցեսալե հատակների իրականացում	մ2	29,4	4,98	146,41
9	Պատերի սվաղում ցեմ. ավազե շաղախով, հախճասալի տակ	մ2	96	1,80	172,80
10	Պատերի երեսապատում հաղճասալով	մ2	96	5,80	556,80

11	Պատերի վերին մասի սվաղում ցեմ. ամառանոց շառասխով, բասեռավված ոռասնի	մ2	48	1,80	86,40
12	Սվաղած մակերեսների մածկապատում	մ2	48	0,30	14,40
13	Նույնի ներկում ջրաէմուլսիոն ներկով	մ2	48	0,89	42,72
14	Միջնորմների գաջե սվաղում	մ2	17	2,45	41,65
15	Նույնի ներկում ջրաէմուլսիոն ներկով	մ2	17	0,89	15,13
16	Մետաղապլաստե դռների տեղադրում (ներառյալ սարքերը, կողպեքը)	մ2	8,4	36,30	304,92
17	Ալյումինե միջնորմների տեղադրում, ոռնանեռով	մ2	12	26,40	316,80
18	Առաստաղների գաջե սվաղում	մ2	29,4	2,45	72,03
19	Նույնի ներկում ջրաէմուլսիոն ներկով	մ2	29,4	0,89	26,17
20	Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում բաքով	հատ	7	25,70	179,90
21	Կերամիկական լվացարանների տեղադրում	հատ	7	20,80	145,60
22	Միզամանների տեղադրում	հատ	3	9,80	29,40
23	ՊՊԲ 2x2.5մմ2 հատվածքով, հաղորդալարի անցկացում	գմ	36	0,48	17,28
24	Անջատիչների տեղադրում	հատ	6	0,55	3,30
25	Լուսատուների տեղադրում շիկացման լամպերով	հատ	6	3,40	20,40
26	Ասֆալտե ծածկույթի քանդում /10մ2/	մ3	0,5	3,25	1,63
27	Խճից նախապատրաստական շերտի քանդում	մ3	1,5	0,56	0,84
28	Շին. աղբի բարձում ատոմնքնաթափերի վրա և արտահանում	տ	4	2,90	11,60
29	Խճից նախապատրաստական շերտի վերականգնում 15սմ հաստությամբ	մ2	10	1,35	13,50
30	Ասֆալտե ծածկույթի վերականգնում, հատ. 50մմ	մ2	10	4,30	43,00
31	IV կարգի բնահողի քանդում խրամուղիներում էքսկավատորով,	մ3	35	0,48	16,80
32	IV կարգի բնահողի քանդում խրամուղիներում ձեռքով	մ3	4	3,30	13,20
33	Հողի ետլիցք մղանով	մ3	35	0,10	3,50
34	Հողի ետլիցք ձեռքով	մ3	4	1,50	6,00
35	Պողպատե էլեկտրաեռակցված Ի32մմ խիստ ուժեղացված հակակոռոզիոն	գմ	55,6	2,30	127,88
36	Փականներ Ի32մմ	հատ	2	3,80	7,60
37	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից	գմ	20	2,25	45,00
38	Փականներ Ի15մմ	հատ	7	2,45	17,15

39	Պոլիէթիլենային բաքի տեղադրում	հատ	1	38,50	38,50
40	Բաքի հիմնակմախքի պատրաստում	կգ	36	0,45	16,20
41	Ասֆալտե ծածկույթի քանդում /20մ2/	մ3	1	2,80	2,80
42	Խճից նախապատրաստական շերտի քանդում	մ3	3	0,53	1,59
43	Շին. աղբի բարձում ատոինքնաթափերի վրա եւ արտահանում	տ	8	2,90	23,20
44	Խճից նախապատրաստական շերտի վերականգնում 15սմ հաստությամբ	մ2	20	1,40	28,00
45	Ասֆալտե ծածկույթի վերականգնում, հաստ. 50մմ	մ2	20	4,30	86,00
46	IV կարգի բնահողի քանդում խրամուղիներում էքսկավատորով	մ3	15	0,60	9,00
47	IV կարգի բնահողի քանդում խրամուղիներում էքսկավատորով,	մ3	27	0,48	12,96
48	IV կարգի բնահողի քանդում խրամուղիներում ձեռքով	մ3	5	3,30	16,50
49	Հողի ետլիցք մղանով	մ3	27	0,10	2,70
50	Հողի ետլիցք ձեռքով	մ3	5	1,50	7,50
51	Ավելորդ հողի արտահանում	տ	30	2,90	87,00
52	Ի150մմ վինիլքլորիդի խողովակների տեղադրում	գմ	31	2,10	65,10
53	Ի1000մմ կոյուղու դիտահորի հավաքովի ե/բ բետոնե տարրերի	մ3	1,5	78,40	117,60
54	Թուջե մտոց "Т" տիպի	հատ	1	41,86	41,86
55	Մետաղական աստիճաններ	տ	0,005	520,00	2,60
56	Պողպատե միացնող էլեմենտներ հորերի համար հակակոռոզիոն	կգ	0,04	540,00	21,60
	III.Ընդամենը /հազ. դր./				3267,92
	IV Կեղտաջրերի կուտակման հորի կառուցման աշխատանքներ				
1	Բնահողի մշակում էքսկ. 4-րդ կարգ	1000մ3	0,124	485,35	60,18
2	Բնահողի ետ լիցք բուլդոզերով	1000մ3	0,044	36,40	1,60
3	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափով	1000մ3	0,08	314,50	25,16
4	Ավելորդ հողի տեղափոխում 2 կմ	տոննա	160	0,48	76,80
5	Հողային աշխատանքների կոլիցում	1000մ3	0,092	19,26	1,77
6	Ա/ցեմենտ խողովակների տեղադրում Φ 200 մմ	մ	4,8	5,60	26,88
7	Թուջե մտոցի տեղադրում	հատ	1	27,03	27,03
8	Բետոնե նախաշերտի կառուցում	մ3	2	23,72	47,44

9	Ե/բետոնե հատակների կառուցում M 200 բետոնից	մ3	4,97	27,40	136,18
10	Ե/բետոնե պատի կառուցում M 200 բետոնից 30 սմ հաստությամբ՝	մ3	17,22	39,50	680,19
11	Ամրան A-1 AC-1	տոննա	0,267	423,00	112,94
12	Ամրան A-3 A-500 C	տոննա	2,14	485,00	1037,90
13	Մետաղական ելոտանի տեղադրում	տոննա	0,036	586,00	21,10
14	Միաձույլ ե/բ ծածկ B20 դասի բետոնից	մ3	3,3	39,50	130,35
15	Ամրան A-1 AC-1	տոննա	0,044	423,00	18,61
16	Ամրան A-3 A-500 C	տոննա	0,549	485,00	266,27
17	Ե/բ օղակի տեղադրում Ф 700 մմ	հատ	1	34,60	34,60
18	Ջրամեկուսացում բ/մածիկով	100մ2	0,66	57,20	37,75
19	Դեֆլեկտորի տեղադրում D400	հատ	1	22,49	22,49
Ընդամենը I - IV		/հազ. դր./			41768,18
Շահույթ 10%		/հազ. դր./			4176,82
Ընդամենը		/հազ. դր./			45944,99
ԱԱՀ 20%		/հազ. դր./			9189,00
Ընդամենը		/հազ. դր./			55134,00

(Հիսունհինգ միլիոն մեկ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արզ և Այծեմնիկ» ԲԲԸ
ք.Էջմիածին, Նար-Դոսի 3
հ/հ 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ
ՀՎՀՀ 04704351
________ Ջ. [illegible]ետրոսյան
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276
________ Փ.Կարապետյան
Կ.Տ

Հավելված № 2
<<27>> ապրիլի 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
№ << ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-11/1- 6 գնման պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> _____ 20 թ.

Պայմանագրի անվանումը՝----------

-------Պայմանագրի կնքման ամսաթիվը <<____>> _____20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____
և կատարողը՝ ի դեմս_____ , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<____>> _____20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի /պատասխանատու ստորաբաժանման/ N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները /այսուհետև՝ աշխատանքներ/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<____>> _____20 թ.-ից ՝ <<____>> _____20 թ.ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակա-ցույցի/
Ընդամենը	----------	----------		---------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____

Հավելված № 3
<<__27___>>__04_____ 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-11/1-6 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(հազար ՀՀ դրամ)

N ը/կ	Գնման առարկայի անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում								
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը տարի**
1	ՀՀ Արմավիրի մարզի գ.Արաքսի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ	16850,4	16850,4	50551,2	50551,2	50551,2	56168,0	56168,0	56168,0	**56168,0**
1	ՀՀ Արմավիրի մարզի ք.Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ	16868,1	16868,1	50604,3	50604,3	50604,3	56227,0	56227,0	56227,0	**56227,0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք.Էջմիածին, Եղբ.Դոսի 3
ՀՎՀՀ 163118009113
Հայաստանբանկի Էջմիածնի մ/ճ
ՀԱՀՀ 04704351

Ա. Պետրոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏՀԳ
ՀԱՀ 04415276

Փ. Կարապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված գնման պայմանագրերի մասին

Հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն

2011թ. Ապրիլի 27-ին ՀՀ Արմավիրի մարզպետարանի, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 71 հասցեում և <<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ -ի, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, *ք.Էջմիածին, Նար-Դոսի 3* հասցեում, միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր /այսուհետև՝ պայմանագիր/:

Գնման առարկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գ.Արաքսի միջնակարգ դպրոցի և ք.Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է կազմում է 112 395 000 (մեկ հարյուր տասներկու միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գնումները կատարվում են վերը նշված օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Պայմանգրերը կնքվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի № 340-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ ԲԸԱՀ գնում կատարելու ձևով:

<<ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ>> ՊԿՀ

27.04.2011թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի
թիվ-12 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների

/ հազար ՀՀ դրամ/

ՀՀ	Աշխատանքների անվանումները	Չ/Մ	Ծավալը	1Միավորի ընդհանուր արժեքը /հազ դրամ/	Ընդհանուրի արժեքը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	Տանիքի գոյություն ունեցող փաթթոցային ջրամեկուսիչ ծածկույթի քանդում	մ2	184.00	1.98	364.32
2	Քիվապատերի թիթեղի ծածկույթի քանդում	մ2	278.00	0.40	111.2
3	Փ- 125մմ թուջե խող. ջրհոսների քանդում	գ.մ	106.00	0.35	37.1
4	Փ.125մմ թուջե ձևավոր մասերի քանդում	տն	0.30	30.00	9
5	Ջրհոսների թուջե ճագարների քանդում	հատ	12.00	2.20	26.4
6	Ջերմամեկուսիչ շերտի քանդում ե/բ գոտիների պատրաստման համար	մ3	36.80	3.50	128.8
7	Ջրամեկուսիչ և հարթեցնող շերտերի քանդում ե/բ գոտիների պատրաստման համար	մ2	184.00	0.80	147.2
8	Շին. աղբի հավաքում, բարձում ավտոինքնաթափերի վար և արտահանում	տն	29.030	3.400	98.702
	Ընդամենը				922.722
	Նոր տանիքի կառուցում				
1	Ե/բ միաձույլ գոտիների պատրաստում B15 դասի բետոնից	մ3	13.800	32.800	452.64
2	Ամրան Ի8Ac -1/ցանց/	տն	0.550	640.000	352
3	Տանիքի փայտյա կրող կառուցվածքների տեղադրում	մ3	28.10	147.500	4144.75
4	Ճարմադներ Ի10AC-1ամրանից /ըստ նախագծի/	տն	0.070	485.000	33.95
5	Տոլ հենատախտակների տակ /ըստ նախագծի/	մ2	153.600	1.840	282.624
6	Տանիքի ծածկույթի պատրաստում ցինկապատ մանրապրոֆիլային թիթեղից d -0,55մմ/ներառյալ կավարամածո/	մ2	982.20	5.850	5745.87
7	Ջրորդանի պատրաստում ցինկապատ թիթեղից հարթ d-0,55մմ, ներառյալ տախտակամածը	գմ	106.80	4.950	528.66
8	Գազաթնամասի պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից d-0,55մմ	մ2	105.30	4.800	505.44
9	Կեռեր շերտավոր պողպատից -2×20,249 հատ /ըստ նախագծի/	կգ	14.300	0.580	8.294
10	Հենակներ շերտավոր պողպատից- 4×40/ըստ նախագծի/	կգ	102.600	0.680	69.768
11	Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից ներառյալ ջրհոս ճագարները	կ-տ	15.000	28.500	427.5
12	Տանիքի անվտանգության ճաղաշարի պատրաստում	գմ	384.000	1.800	691.2
13	Տանիքի անվտանգության ճաղաշարի արժեքը Ի20Ac-1 ամրանից	տ	2.300	430.000	989
14	Տանիքի անվտանգության ճաղաշարի յուղաներկում 2 շերտ	մ2	114.900	1.850	212.565

15	Փայտյա կառուցվածքների հրապաշտպանում	մ3	28.1	21.300	598.53
16	Կավարամածի և տախտակամածի հրապաշտպանում	մ2	1060.00	0.320	339.2
17	Կավարամածի և տախտակամածի մշակում հակաճեխիչ մածիկով	մ2	1060.00	0.340	360.4
18	Ձեղնապատուհանների պատրաստում շերտափեղկով	հատ	12.00	32.500	390
19	Ձեղնապատուհանների հրապաշտպանում	մ3	7.20	21.300	153.36
20	Ձեղնապատուհանների մշակում հակաճեխիչ մածիկով	մ2	158.70	0.340	53.958
21	Ձեղնապատուհանների պատում ցինկապատ հարթ թիթեղով d=0,55մմ	մ2	124.80	5.800	723.84
22	Շերտափեղկերի յուղաներկում	մ2	26.40	2.400	63.36
23	Փայտյա աստիճանների պատրաստում/6հատ/	մ3	0.60	145.000	87
24	Փայտյա աստիճանների յուղաներկում	մ2	6.60	2.400	15.84
25	Պատուհանների շեպերի գաջե սվաղի քանդում	մ2	270.00	0.650	175.5
26	Հին փայտե պատուհանների հանում	մ2	643.30	0.480	308.784
27	Շին. աղբի հավաքում, բարձում, ավտոինքնաթափերի վար և արտահանում	տ	8.30	3.400	28.22
28	Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից, 60մմ հաստության ապակեփաթեթով պատուհանների տեղադրում (ներառյալ սարքերը, ապակեփաթեթը)	մ2	643.30	31.484	20253.43
29	Սպիտակ գույնի պլաստմասե պատուհանագոգերի 350մմ լայնությամբ	գմ	346.00	7.020	2427.71
30	Պատուհանների շեպերի գաջե սվաղում	մ2	270.00	2.880	777.6
31	Պատուհանների շեպերի ներկում ջրաէմուլսիոն ներկով	մ2	270.00	1.750	472.5
	Ընդամենը				41673.5

Ընդամենը /Հազ դրամ/		42596.2
Շահույթ 10%	/հազ. դրամ/	4259.6
Ընդամենը	/հազ դրամ/	46855.8
ԱԱՀ 20%	/հազ.դրամ/	9371.2
Ընդամենը		56227.0

(Հիսունվեց միլիոն երկու հարյուր քսանոթ հազար) ՀՀ Դրամ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արա և Աշխենիկ »ԲԲԸ
ք. Էջմիածին, Վար -Դոս 3
ՀՎՀՀ 163118009113
Հայէկոնոմբանկի Էջմիածնի մ/ճ
ՀՎՀՀ 04704351

Ջ.Պետրոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր. Աբովյան 71
ՀՀ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276

Փ. Կարապետյան